հանդէս չարութեան, և որպէս գրեցաք՝ թէ ո՛րպէս հակառակեցան պատրիարգին Թումայի, և հանապազ երթային գային ի տիւանն, եւ ի ծածուկս հաճեցեալ զկամս փաշային, ասեն՝ Մեք տացուք զի՛ քսակ պօստանոց և քեզ ևս այսքան դրամ։ Նաև սուպաշոյն ետուն կաշառս, զի ի մէջ գրոյն մահադեղ խառնեալ ընդ զահվէի արբոյց նմա սուպաշին ի գիշերի, յորմէ խոցեալ ի սիրտն՝ պառաչէր գոռալով, ասէ, և աղաղակէր առ Տէր։ Եւ իբրև գոչէր որպէս զառիւծ ի սրտէ, իբրև թէ սլաք մտեալ ի թոքն, և ի ձայնէ աղաղակին ամենայն բանտն դղրդէր և բանտարգեալքն ի նմա սարսէին։ Նոյն ժամայն ի ձեռն դահճին ըմբըռնեալ կալեալ եւ յերանացն ճմլեցուցեալ, զի անդէն անկեալ նուաղէր եւ դառն եւ սաստիկ մահուամբ եւ կսկծանօք զհոգին առ Տէր արձակէր Թումայ՝ յաւուր Շաբաթի երեկոյին որ Կիրակի լուսանայր՝ յՕգոստոս ամսոյ առաջին աւուր։ Եւ յորժամ լուան նոքա՝ ըզխրախճանս նոցին զի՞ պատմեսցուք եւ զուրախութիւնս նոցա ո՞րպէս գրեսցուք. որպէս զՏրդատ համարէին, որ յաղթեաց զԼիկանէս, եւ որպէս զՍղեքսանդր որ վերացոյց զթագաւորութիւն Դարեհի Պարսից եւ զՊօվրոսին Հնդկաց. պանծալն պարծիլն անասելի։ Բայց ոմանց կերոնաւ և զամբարիւք վառելովք ի ձեռս խաղային(*), ասէ, ի գիշերիս այս. եւ այս՝ խորհրդեամբ փաշային քեհեայի եղև և սուպաշուն։ Եւ առաւօտուն կաշառեցին զմեծ զատին զի սիճիլ արար թէ Մահուամբ մեռաւ՝ վկայեալ Տաճկաց, տեսանելով ի վերայ նորա զի տեղի խոցոյ եւ վիրաց կամ ի պարանոցն կապուտած և կարմրած տեղի չուանի չկենալն, իբր թէ ոչ ոք է մերձեալ ի սայ, այլ իւրով մահուամբ մեռեալ։ Եւ ձգեալ արտաքս զմարմին

(*) ի Սուրբ Գէորք։